



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



99
12

07 JAN 2009

10 NOV 2011

52 Կ5

Գ. ԲԵԲԵԽՈՒԽԵԽԵ

ՏՈՆՈՒՏՔԵՐ ՕՀԱՆՆԵ

391.99
F-12

Կ Պատմական գրուց

Երանի նրան, որ մինչև իր շունչը վերջին
Հաւատարիմ կը մնայ իր հայրենի հող ու ջրին:



ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշաբաթ տպա. Մ. Վարդանեանցի, Գան, № 3.
1906

26.02.2013

22647

ԽՍՀ ԱԿ 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՅԱՅՐ ԱԿՏ

Էլեկտրոպечառն Մ. Վարդանյան, Գանով. № 3.

ՏԱՆՈՒՏԵՐ ՕՀԱՆԸ

Այս անցքը պատահեց ուղիղ հարիւր տարի սրանից առաջ, երբ երջանկայիշատակ գեներալ Զուբովը իր յաղթանակող զօրքով մօտենում էր Շիրւանի գաւառին, երբ դեռ բռնակալի սուրը փայլում էր հազարաւոր խեղճ և անպաշտպան ժողովրդի վկանին։ Այդ 1796 թվին էր։

Թուրք խաների և բէկերի սարսափելի կերպով կատարած արիւնահեղութիւնները լսելով Ռուսաց կայսրունի Եկատերինէ Բ.Ա. զօրք ուղարկեց Կովկասեան քրիստոնեաներին ակատելու համար։

Այդ ժամանակ քաղաքում նստած էր Մուսաֆայ խանը։ Լսելով ոսների գալը նա սկսեց պատերազմի պատրաստութիւն տեսնել։ Եւ ահա մի կողմից ոսների գալը, միւս կողմից հայերի գաղտնի հարաբերութիւնները նրանց հետ, ուելի ևս գրգռեցին մոլեռանդ մահմեղականներին, որոնք տարիներ շարունակ միշտ հալածում էին քրիստոնեայ ժողովրդին։ Թէև նրանք առաջ գաղտնի՝ աւազակի պէս գիշերներով էին յարձակում հայ գիւղերի վրայ, սակայն այժմ ըսկըսեցին օրը ցերեկով մտնել հայերի զիւղերը և կատարել իրանց գաղանութիւնները։ Այդ ժա-

մանակ անպաշտպան ժողովուրդը չըկարողանաւ-
լով տանել թշնամու ծանր և անտանելի հալա-
ծանքները, մեծամասնութիւնը սկսեց գաղթել
իր հայրենիքից:

Թշւառ զիւղացին երկար տարիներ արիւն
քրտինքով վաստակած աշխատանքի մեծ մասը իր
սեպիական սայլով բաժին էր տանում խաներին
ու բէկերին: Իսկ այժմ՝ զրկւում էր իր սեպիա-
կան մասիցն ևս:

Զրկւում էր տարիների ընթացքում հազիւ-
կառուցած աղքատիկ խրճիթիցը: Վերջապէս ա-
ման ինչ թշնամուն էր յանձնում. միայն իր կեան-
քըն էր ազատում կատաղի թշնամու ձանկերից:
Եւ ուր էին գաղթում նրանք, դէպի որ կողմը,
արդեօք կար մի զիւղ կամ մի քաղաք, ուր այդ
ժանանակ ըլթագաւորէր բռնակալի սուրը, — ոչ:
Որ կողմն էլ գնային, կասկած չըկար, որ տա-
կաւին պիտի հանդիպէին կատաղի թշնամուն,
ուստի յոյսերը կտրած, նրանք քաշուեցին տե-
րևախտ անտառները և մուացին սովատանջ: Թըշ-
ւառ ժողովուրդը բոպէ առ բոպէ սրտատրով
սպասում էր, որ շուտով օգնութեան կըհասնէ
վեներալ Զուբովը և իրանք կըմտնեն ոռուաց
ազատ զրօշակի տակ: Օրը օրի վրայ էր անցնում,
սակայն վեներալ Զուբովը դեռ հեռու էր Շիր-
անի դաւառից: Նա դեռ յաղթական զրօշակով
նոր էր անցել Դերբենդից, և գալիս էր Դուրայ
քաղաքի վրայ: Ամեն օր լսում էր թէ ինչպիսի
քաջութեամբ տռաջ էր զալիս ոռուաց զօրքը:

Նրանք արդէն առանց պատերազմի գրաւել էին
Դերբենդը և տեղական Շըխ-Ալի խանին գե-
րի էին առել հետները: Այդ լուրերը լսելով՝
մահմեդականներն աւելի ևս գրգռւեցին հայերի
դէմ: Եւ այդ օրից քար-քարի վրայ չըթողին այն
սահմանում, որաեղ ատզում էր հայ կամ քրիս-
տոնեայ մի ազգ: Բայց այդ սարսափելի բոպէ-
ներում միմիայն մի զիւղ կար, որ իր տեղից ը-
շարժւեց, որովհետեւ այդ զիւղի մէջ զանւեց մի
մարդ, որն իր անվեհերութեամբ և քաջութեամբ
կարելոյն չափ պաշտպան եղաւ ժողովրդի մի
ստուար խմբին և չըթողեց, որ գաղթեն իրանց
հայրենիքից: Դա Կ. զիւղի տանուտէրն էր, որի
անունն էր Օհան: Նա բնիկ Կ. զիւղացի էր:

Նրա բարձր և վիթիարի հասակը տեսնողը
կարող էր ասել, որ գրա ծնողը մարդկային ա-
րարած չի եղել, ալլ մի ահոելի վիշապ. Նրա եր-
կար բազուկները և յաղթանդամ լայն թնկունըը
ցոյց էին տալիս նրա անսաելի քաջութիւնը: Ինչ-
պէս նա իրանց զիւղի տանուտէրն էր, նոյնպէս
և քաջ զինւորն էր: Նա միշտ զիւղերն իր սպիտակ
նժոյգի վրայ նստած, զէնք ու զրահի մէջ փաթաթ-
ւած, շըջումէր իրանց զիւղի չորսկողմը, որպէս մի
արթուն զինւոր, որ շըջում է պահականոցի շուրջը:

Շատ զիւղերներ նա իր տանը չէր գտնւում,
Աստւած զիտէր, թէ նա ինչ էր կատարում այդ
ժամերին: Իսկ առաւոտեաները զեռ արկը շըծա-
գած նա կանգնած էր լինում զիւղամիջում:
Այն օրւանից, որ նա տանուտէր էր նշա-

Նակւել իրանց գիւղի վրայ, ոչ մի փորձանք չէր եկել այդ գիւղի գլխին: Ոչ մի թուրք, ոչ մի աւազակ չէր մօտեցել նրանց: Թէև մի քանի թուրք բաշիրողուկներ և յայտնի աւազակապետ Մէյթի-բէկը մօտեցել էին այդ գիւղին, սակայն ամենքըն էլ ստացել էին իրանց արժանի պատիճը տանուտէր Օհանից ու սարսափահար յետ փախել: Նա այն սատիճան ահ էր գցել իւրաքանչիւր թուրք աւազակի սրտի մէջ, որ եթէ լսէին թէ տանուտէր Օհանը այս ինչ ճանապարհով պիտի անցնի, լսկոյն մի կտոր քար կը դառնային և էլ չէին երևալ այն սահմաններում:

Գաղթականութիւնը սկսեց յուղսի սկզբից: Շիրւանի ամբողջ ըրջակայքում մի հայ գիւղ չէր մնացել, որ ենթարկւած չըլինէր թշնամու յարձակման: Թալանել, քանդել, աւերել, տակն ու վրայ անել ամեն ինչ, — ահա նրանց գործը: Բայց գեռ թշնամին չէր մօտեցել կ. գիւղին, որովհետեւ բաշիրողուկների գլխաւոր արիւնաբրու առիւծը՝ Մէյթի-բէկը, որից սարսափում էր ամբողջ Շիրւանի գաւառը վախենում էր կ. գիւղի տանուտէր Օհանի անունը լսելիս: Բայց ահա նա երբ իր խմբով տակն ու վրայ արեց մի քանի օրւայ մէջ նաև գիւղը, այն ժամանակ ինքն իր մէջ համոզւեց, որ այլև կ. գիւղացոց վրայ յարձակւելը գտւար չէ կարող լինել իրանց համար, որովհետեւ նաև գիւղը այնքան հեռու չէր

կ. գիւղից: Այդ երկու գիւղերն երբեմն պաշտպանում էին միմեանցով, բայց այժմ երբ նըրանցից մէկը, համարեա կործանւած է՝ Մէյթի-բէկը կարծում էր, որ կ. գիւղացիք այլ ևս ոյժ չեն ունենալ իրանց գիմալրելու:

Այն ինչ՝ կ. գիւղի բնակիչները վաղուց էին գուշակել թշնամու մտադրութիւնը և գրահամար նրանք իրանց պատրաստութիւնը վաղօրօք տեսել էին: Եւ ահա երբ նրանք պարզապէս իմացան թէ աւազակապետ Մէյթի-բէկը մտադիր է իր խմբով մի գիշեր գաղտնի ձեռվ յարձակւել իրանց գիւղի վրայ, տանուտէր Օհանը սկսեց իր պատրաստութիւնը տեսնել:

— Զեղ ամենքիդ արգէն յայտնի է, յարգելի ժողովուրդ, ասում էր նա, թէ այս ըոպէիս ինչ վտանգ է սպառնում մեր գիւղին: Մեր կեանքը այժմ վտանգի մէջ է և պէտք է շտապել գրատուան առնել: Գիտէք գուք, որ Շիրւանի հայրնակ գիւղերը բոլորովին դատարկւեցին, վախելու և ծոյլ ժողովուրդը տարիների ընթացքում իր ձակատի քրտինքով ձեռք բերած աշխատանքը թշնամուն թողնելով, գաղթեց՝ մի մասը հեռաւոր լեռներ, իսկ միւս մասը գէպի ուռասց զօրքը: Այդ անօրէն Մէյթի-բէկը իր բաշիրողուկներով քանդեց, տակն ու վրայ արաւ տամնեակ չէն հայի գիւղեր: Նա զեռ այդքանով չըբաւականալով, պատրաստում է յարձակւելու մի օր էլ մեր գիւղի վրայ: Բայց, ի հարկէ, չըմասծելով՝ թէ տանուտէր Օհանը ինչպիսի կարմիր

գնդակ է պատրաստել նրա համար, Գիտէք, եթէ
մենք ուղենանք թոյլ չենք տալ, որ այդ անօրէն
թշնամիները ոտք կոխեն մեր սահմանը, Մենք
չըպէտք է շատերի պէս թողնենք մեր գիւղը,
մեր ընտանիքը, մեր ունեցած կայքը և վախկոտ-
ների պէս հեռանանք լեռները, այլ մինչև գենե-
րալ Զուբովի գալը մենք ևս պիտի ցոյց տանք
մեր քաջութիւնը որպէս զի վաղւան օրը գենե-
րալն էլ տեսնի, թէ մենք վաղուց ենք զզւել
բոնակալ խաներից և բէկերից: Վաղուց է որ սր-
պասում ենք ամենաողորմած թագուհու օգնու-
թեանը ու կամենում ենք թօթափել մեր վզից
խաների ծանր լուծը և մտնել նրա հովանաւո-
րութեան տակէ Հաւատացնում եմ, որ եթէ մենք
տեղներից չ շարժենք և քաջութեամբ գիմաղը-
բենք թշնամուն, ամենքս պարզ երեսով կարող
ենք դուրս գալ գեներալի առաջ և բացի գրա-
նից մեծ անուն կարող ենք վաստակել. տեսնում
էք մեր Մարկոսենց Ազարէկին որքան նշաններ
ունի իր կրծքի վրայ: Նա նոյնպէս իր քաջու-
թեամբն է ստացել ուսւաց զնդի մէջ եղած ժա-
մանակ: Այժմ եթէ մեր գիւղացիքն էլ քաջու-
թեամբ կիմաղը թշնամուն, տարակոյա շրկայ
որ մեր և ըստանչիւրի քաջութիւնը տեսնելով
գեներալը՝ մեր կրծքերը նշաններով կըզարդարի:
Եւ եթէ այդպէս լինէին Շիրւանի ամբողջ հայա-
բնակ գիւղերը, այսօր այդ աստիճան խեղճ գառ-
ուկ չէին երկաւ թշնամու աշքին: Տեսնում էք,
ուսները խղճալով մեզ՝ օգնութան են հասնում,

իսկ մեր գիւղացիները իրանց սիրած հայրենի-
քը, պաշտած հողն ու ջուրը բաշիբոզուկ աւա-
զակներին թողած՝ զաղթում են հեռաւոր լեռնե-
րը և մնում են այնտեղ սովատանջ գրութեան
մէջ. ի հարէկ վերջն էլ միոնում փշանում են:
Կարծես թշնամին գայլ լինի, իսկ մենք գառը-
Մինչգետ երկուսս էլ մի Աստծու ստեղծած մար-
դիկն ենք, բայց ինչուն նրանք չաջ են, իսկ մենք
ծոյլ եւ վախվոտ: Ինչու մեզ համար կենակը
բաղցը է, իսկ նրանց համար դառը, կամ նրանք
քարից են ծնւած իսկ մենք մարդից: Զէ որ նք
ըսնցից իւրաշանչիւրն էլ մեզ պէս ունի ծնող-
ներ, որոնք հեռաւ երկրներում սպասում են ի-
րանց որդու քաջ ու կարիճ անունը լսելուն: Զէ
սիրելիք, եթէ այսօր քաղցը է նրանց համար
կուի գաշտում մեանելը, նոյնը պիտի լինի և
մեզ հաճար: Աւելի լաւ է քաջութեամբ սուրբ
ձեռքին ընկնել կուի գաշտում, քան թէ վախ-
կոտ կատուի պէս ամայի գաշտերում մահամերձ
կինել:

Այս խօսակցութիւնը տեղի էր ունենաւմ
գիւղի լայնատարած փողոցում, որտեղ երեկոնե-
րը իւրաքանչիւր տնից մէկ-մէկ գալով՝ կազմւում
էր ահազին բազմութիւն: Նրանք միշտ ժողով-
ւելով այնտեղ, խօսում էին օրեայ գէպքերի մա-
սոնն, իսկ այժմ՝ նրանց խօսակցութեան նիւթը
միմիայն այն էր, թէ, երբ պէտք է ուսւաց զօր-
քը օգնութեան համնի իրանց, երբ պէտք է ա-
պահով լինի իրանց կեանքը և այդ մասին խօ-

սողը միշտ տանուտէր Օհանն էր, ոքի ապածները ուշագրութեամբ էին լուռմ իր համազիւղացիները։ Նրա խօսքերը այն աստիճան ազդում էին գիւղացիների վրայ, որ համարեա ամբողջ գիւղը պատրաստ էր քաջութեամբ կանգնել թշնամու տուաջ։ Եւ մինչև անգամ ոչ թէ գէնքերով, այլ և իրանց մահակներով։ Բաւական էր, որ նրանք հասկացան թէ կույն իրանց կեանքի, իրանց սիրած ու պաշտած մայրենի հող ու ջրի համար էր։ Նրանք բոլորն էլ երդւեցին, որ մինչև իրանց վերջին, շունչը կըդիմազրեն թշնամուն, մինչև որ կըմօտենայ ոռուսաց զօրքը և իրանք կացնեն նրանց աղատ զրօշակի տակ, մինչև որ իրանց կեանքն ապահով կըլինի։ Այսպէս ահա այս բոլորը զլուխ բերելուց յետոյ՝ տանուտէր Օհաննին մնում էր իմանալու թշնամու մտադրութիւնը, թէ նա երբ է որոշել իրանց վրայ գալու, և այդ դժւար չէր տանուտէր Օհանի պէս անվախ հսկայի համար։ Նա մի օր ծպտեալ ձևով ճանապարհ ընկաւ դէպի թշնամու բանակը։

Բ

Խան գիւղը քանդել տւերելուց յետոյ ապակապետ Մէյթի-բէկը բացի իր բաշիքոզուկ խմբից, ժողովեց իր զլիխն Շիրւանի լեռնական չերքեզների մի ստւար խումբ և պատրաստւեց յարձակում զործել այժմ էլ Կ. գիւղի վրայ...

Բայց օր օրի վրայ աւելի ծշղուած էր ուղաների գալու մասին տարածւած լուրը։ Ուստի, թէս մի կողմից Մէյթի-բէկը վախենում էր, որ մատնէրի ուների ձեռքը, առկայն, միւս կողմիցն էլ, ինքն իրան յոյս էր տալիս, որ մինչեւ ուղաների գալը նա իր անելիքը վերջացրած կըլինի և կըփախչի Պարսկաստանի խորքերը։ Եւ ահա այդ մտագրութեամբ նա կամենում էր որքան կարելի է շուտ զլուխ բերել իր անելիքը։ Մի օր, երբ նա իր խումբով գտնւում էր Հաւթարանի անտառում, ասաց իր հետեւորդներին,

—Գիտէք ինչ՝ պէտք է մնէք, խոլամի ոլգիք։ Մէր առաջին գործը պէտք է լինի՝ մի գիշերւայ մէջ տակնուվրայ անել ամբողջ Կ. գիւղը ու կենակնի բոնել այդ գեաւուր Օհանին։ Միթէ մենք պէտք է հպատակւենք քրիստոնեաներին, որ միշտ մեր ձեռքի տակն են մեծացել, միշտ մեր դագանակի տակ իրանց զլուխը խոնարհել։

—Տղերք, բարձր ձայնով շարունակեց Մէյթի-բէկը. ամօթ և նախատինք այն սիւննուն, որ այդ գեաւուր հայերին գառան պէս չըմորթէ։ Պէտք է աւերել ամբողջ Կ. գիւղը, կոտորել անխընայ, կողովաել ամեն ինչ, թողնել միմիայն աւերակների կոյտեր, որ յետոյ ոսները գան և տիրեն այդ աւերակներին։

—Այդպէս էլ պէտք է անենք, —պատրախանեց ամբողջ խումբը, —էլ ինչու ենք սպատում ինչ որ անելու էք շուտով կատարեցէք, չէ որ

կարող ենք յանկարծ մատնւել ուսների ձեռքը։
—Ամենաբարձրեալ Ալլահը և մեծ Մահմէդը
իր հզօր կարողութեամբ ոյժ և քաջութիւն կը-
տայ մեղ, —շարունակեց Մէյթի-բէկը։
—Իմ կարծիքով հէնց այսօր պէտք է կա-
տարենք մեր անելիքը, ասաց խմբի ամփամե-
րից մէկը։

—Այս, հէնց այսօր, —խօսեց նորից Մէյթի-
բէկը, այսօր, քանի որ այդ անօրէնները կամե-
նում են որ մեր իրաւունքները անցնի ուռաց
ձեռքը։ Ա՛խ, եթէ այդ գեաւուր Օհանը կենդա-
նի ձեռքս կընկնի, դուք կըտեսնեք թէ, ինչպիսի
պարզեներ տալով կուղարկեմ նրան գեներալ
Զուբովի մօտ։

Մինչդեռ Մէյթի-բէկը ոգեսրւած իր խմբի
հետ էր, երբ յանկարծ հերւից մի սև ձիաւոր
երևաց, որ գալիս էր զէպի իրանց կողմը, ար-
ծըւի արագութեամբ։

—Այդ ով պէտք է լինի, ասաց Մէյթի-բէկը,
գիտելով ձիաւորին։

Սիւնու է նմանում, պատասխանեցին մի
քանիսը։

—Ոչ, դա կարծես հայ լինի, այն էլ մեղ
ծանօթ, ասաց մի ուրիշը։

—Ի՞նչ ես գատարկ դուրս տալիս, պատաս-
խանեց Մէյթի-բէկը։ հային այդքան սիրտ ով է
տւել, որ ուսնելով սիւնիների մի ահազին
խումբ, ուզգակի մօտենայ. դա անպատճառ մե-
րոնցից է։

—Տեսնենք ով է և որաեղից է գալիս, կար-
ծես ծերունի լինի, ասաց Մէյթի-բէկը։ Չանցաւ
մի քանի բոպէ այդ խօսակցութիւնից, երբ միակ
ձիաւորը կանգնեց նրանց առաջ, տալով իր բա-
րեւ ամենքին։

Դա սև զգեստով և վիթխարի հասակով մի
մարդ էր, թէկ նա աղգով սիւննի չէր, սուկայն
ոչ ոք չէր կարող արտաքին ձեւրից նկատել նրա
ինչ աղգից լինելը։ Բայց այնու ամենայնիւ նա
հագնւած էր կատարեալ սիւննու հագուստուով,
փաթաթւած զէնք ու զրահի մէջ։ Եւ ահա այդ
պատճառաւ Մէյթի-բէկը նրա հետ ոկսեց լրջո-
րէն խօսել։

—Բարի լինի՝ այ մարդ, որաեղից ես գալիս
այդպէս շտապով, հարցրեց առաջին անգամ Մէյ-
թի-բէկը։

—Քաղաքից, բէկ. —պատասխանեց ձիաւորը,
Ահա քանի օր է որ լսել ենք ուսների գալը ուս-
տի այդ պատճառաւ էլ այսօր գնացի քաղաք
տեղեկութիւն իմանալու։

—Դուք ո՞ր գիւղիցն էք, հարցրեց Մէյթի-
բէկը։

—Ես Ղաջար գիւղի տանուաէր Սալիմ-բէկն
եմ, եթէ լսած էք, պատասխանեց ձիաւորը։

—Լսած եմ, բայց առաջին անգամն եմ ձեզ
տեսնում, ասաց Մէյթի-բէկը, և շարունակեց։ —
Այս, Սալիմ-բէկ, շուտով ուսները կըգան և մեր
ամեն իրաւունքները կըիւեն մեղանից զուցէ

այսօր, կամ վաղը, Բայց ձեր գիւղը ինչ մտադը-
րութեան մէջ է այդ մասին:

—Մեր գիւղը, պատասխանեց Սալիմ-բէկը,
վաղուց է մտածել իր անելիքի մասին:

—Ի՞նչպէս:

Անա թէ ինչպէս: Եթէ ճիշտ ուները յաղ-
թեցին Մուստաֆայ խանին և տէր գարձան մեր
երկրին այն ժամանակ մենք վճռել ենք վերց-
նել մեր շարժական հարստութիւնը և ուղղակի
անցնել դէպի Պարսկաստան: Փոխանակ ուներին
հպատակւելու կըհաղատակենք մեր Շահին: Բա-
ցի այդ մենք վճռել ենք մեր վրէժը առնել այս-
տեղացի հայերից. — չէ որ նրանք եղան մեր իշ-
խանութեան անկման պատճառը: Թէ չէ ով կա-
րող էր խլել մեր խանական իշխանութիւնը:

—Ի հարկէ, կտրեց նրա խօսքը Մէյթի-բէկը,
մինչի հիմա քրիստոնեաները մեր ճանկերումն
են մեծացել, իսկ հիմա միթէ ամօթ չէ մեզ, որ
մենք հպատակւենք նրանց. աւելի լաւ է գնալ
մեր զահին ծառայել, քան թէ ուներին. հոգ չէ,
որ այստեղից տեղափոխւելով թողնում ենք մեր
անշարժ կայքն ու հարստութիւնը: Մենք այդ ա-
մենի փոխարէն արդէն մտածել ենք մեր անելիքը:

—Այսինքն ի՞նչպէս, — հարցրեց Սալիմ-բէկը:

—Այս, որ մենք այդ ամենի փոխարէն ըս-
կըսել ենք թալանել գեաւուրներին, որոնք մե-
ծամեծ պատրաստութիւններ են աեսնում ուս-
ների գրօշակի տակ մասնելու համար. — Եթէ մեր
խանական իրաւունքները վերջացան, իմացա

եղէք, որ սրատճառը գեաւուր հայերն էին, որ
այժմ էլ այսպէս զլուխ են բարձրացըկ մեզ
վրայ: Սպասէր, երբ աւերակ կըդարձնենք բոլոր
հայաբնակ գիւղերը, այն ժամանակ կըհասկանան
թէ ով է Մէյթի-բէկը, կըհասկանայ և գեաւուր
Ծնանը, թէ ով եմ ես. նրանք կարծում են, թէ
ես էլ Մուստաֆայ խանի պէս նեղ անդ ընկած
ժամանակը անձնատուր կըլինիմ ոսներին, բայց
ոչ, երբէք, եթէ մինչև անգամ մենակ էլ մնամ
կուի դաշտում, դարձեալ իզիթէ պէս, ամենա-
մեծ Ալլահի զօրութեամբ կըկռւեմ թշնամու նետ,
ոոյն խսկ մինչև վերջին շունչ:

Վերջին խօսքերը Մէյթի-բէկը արտասանեց
այսպէս ոգևորւած, որ իր ամբողջ բանակը դար-
մացաւ: Եւ նա մերկացնելով իր երկայն դաշոյնը,
ոորից դարձաւ իր հետևորդներին:

—Տղերք, այսօր մեր վերջնական կտիւն է,
որտեղ պէտք է ցայց տանք մեր անասիլի քա-
ջութիւնը. այսօր պէտք է Կ. գիւղի գլխին այն
խաղը խաղանք, ինչ որ Խան գիւղի գլխին խա-
ղացինք: Իսկ դու Սալիմ-բէկ, գնա, լուր տուր
բոլոր զաջարցիներին, որ քանառունինդ տարւան
աւազակ Մէյթի-բէկը այսօր հայրենիքի ազատու-
թեան համար իր քաջ խմբով պարասատ է կըո-
ւելու գեներալ Զորովի անթիւ ու անհամար
զօրքերի գէմ:

—Բայց չէ որ Մուստաֆայ խանը պատե-
րազմի պատրաստութիւն էր տեսնում, — պատաս-
խանեց Սալիմ-բէկը:

Ճշմարիտ է, որ նա վաղօրօք էր ահեմ նում իր պատրաստութիւնը. բայց ինչ արած, երբ նա խտբւեց մի հայ հոգկորականի^{*)} խօսքով և այժմ էլ, ասում են, որ մտադիր է քաղաքը առանց մի որ և է պատճառի յանձնել ուսներին: Թէև նա վաղուց մտադրւեց դիմել Շուշլայ իբրահիմիանին, որ իրան օդնութեան հասնէ, բայց մինչև այսօր այդ խորհուրդները մի որ և է յետևանք չունեցան: Վերջապէս թող ինչ ուզում է այնպէս էլ անէ խանը, դա մեր գործը չէ, մենք մեր անելիքը լաւ դիմենք, մենք մինչև այսօր՝ քաղաքում նստած խաների ասածնրին բոլորովին չենք հետեւել, որ այսուհետեւ հետեւնք:

Եւ լաւ էք արել, որ չէք հետեւել. հէսց այդ Մուստափայ խանը չէր, որ այդքան ազատ թողեց հայերին, որ վերջը նրանք պատճառ գարձան մեր կողմերը ոռուաց ձեռքն անցնելու:

Բայց այժմ դուք ո՞ր կողմի վրայ էք մտադիր անցնելու, հարցը եց Սալիմ-բէկը. և միենոյն ժամանակ ձիու սանձը քաշեց, որովհետև պատրաստում էր հեռանալ նրանցից:

— Դէպի՞ Կ, գիւղի վրայ, պատասխանեց Մէյթի-բէկը:

— Աւեմն այդպէս, ասաց Սալիմ-բէկը, իրինադէմին մենք ևս այնտեղ կը ինենք: պատասխանեց Մէյթի-բէկը:

^{*)} Այդ հոգկորականը երջանկայիշատակ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանցն էր, որ այդ ժամանակ ցջում էր ոռուաց զօրքի հետ կովկասում:

Մնաք բարեաւ առ այժմ,—ասաց Սալիմ-բէկը և մտրակելով իր ձին՝ հեռացաւ նքանցից: Նրա գնալուց յետոյ Մէյթի-բէկը հրամայեց իր հետեւրդներին, որ պատրաստեն ձիերն ու զէնքերը, մի քանի ժամից յետոյ, գէպի իրանց արշաւատեղը ճանապարհ ընկներաւհամար:



Գիշեր էր:

Երկինքը պատած էր մի այսպիսի մառախուղով, որ ոչինչ նշմարել չէր կարելի: Ամեն տեղ տիրում էր խորին լուսութիւն: Հեռու ձորերից լաւում էր զետեղի անոելի վըշվոցը: Միշտ այդ ձորերից անպակաս էր լինում քարւանը, որ օրական հազարի չափ ներս էր մտնում Շիրւանի գտւառը և նոյնչափ գուրս գնում: Բայց այդ գիշեր քարւաններն էլ չըկարողացան շարունակելիք սովորական ճանապարհը, որովհետեւ այն աստիճան սկացել էր երկինքը, որ նրանք էլ էին կորցնում իրանց ճանապարհը:

Միայն մի ձիաւոր էր, որ ձեղքելով թանձը մասախուղը, առաջ էր գնում: Դա բարձրահասակ, սև զգեստի մէջ փաթաթւած մի մարդ էր: Նա այս գէու արագ էր մտրակում իր ձին, որ կարծես մի կարեսոր գործի էր շտապում: որքան էլ բնութիւնը անախորժ և տիսուր լինէր, այնուամենայնիւ նրս համար նշանակութիւն չունէր

ոչ գետերի անոելի վըշվշոյը, ոչ զարհուրելի մթնագիշերը. երբէք մի վայր՝ իւան անդամ նրանք ահ չէին բերում նրա անվախ սրտին, այլ մըտրակելով իր ձին, թևաւոր թռչունի նման ոլանում էր առաջ:

Դա Կ. գիւղի տանուաէր Օհանն էր, որ վերադառնում էր թշնամու բանակից՝ ամեն ինչ իմացած: Նա հագնւած էր այն ձեռվ, որ տեսնողը կրնմանեցնէր մի թուրք աւազակի. իր երկարած հագուստի վրայից ծածկել էր եափնջին, իսկ մէջքին կապել էր լայն կաշւէ գոտիկը, որի չորս կողմը զարդարւած էր հրացանի գնդակներով. առաջից կախւած էր երկայն դաշոյնը, իսկ մէջքին՝ հրացանը:

Թշնամու բանակից մինչև Կ. գիւղը ընդամենը 70 վերան էր, բայց այդ 3—4 ժամւայ ճանապարհը այնքան ահաւոր էր, որ ոչ մի քրիստոնեայ միայնակ չէր համաձայնվել օրը ցերեկով անցնել այգտեղից: Թէ որքան անմեղ մարդիկ էին զոհ գնացել այդ կարծ ճանապարհը անց ու դարձ անելուց, այդ միայն Աստւած գիտէ: Ո՞րքան անմեղ մարդկանց հէնց այդ ճանապարհի մէջ թալանել էր ու որի բաժին արել արիւնաքրու Մէլթի-բէկը. ո՞րքան անմեղ հայ կանաք այդ ճանապարհի մէջ զոհ են գնացել նրանց գաղանային կըքերին. այդ ամենը շատ լաւ գիտէր տանուաէր Օհանը, որն այս բոպէիս ինքն էր անցնում այդ ճանապարհով:

Վէս գիշեր էր:

Արդէն երկինքը կամաց-կամաց պարզւում էր, բայց գեռ բաւական ճանապարհ կար մինչեւ գիւղ հասնելը. նա գեռ Աղսուի գետից չէր անցել, այլ անցնում էր խտատերե անտառների մօտից. բայց ահա նրա աշքին հեռւից՝ երկում, անտառի խորքից կրակի մի նշոյլ:

— Արդեօք այս ի՞նչ կրակ է, հովիւների է, թէ քարւանների. բայց աւաղ, դա ոչ հովիւների էր և ոչ էլ քարւանների, այլ մի ուրիշ մարդկանց: Մի քանի ըոպէից յետոյ, երբ մօտեցաւ կրակին, ինչ տեսաւ: Անտառի մէջ տեղում բոլորւած էին հինգ հոգուց բաղկացած սիւննի թուրքեր, իսկ մէջ տեղերում բոցավառում էր կրակը: Կրակի շուրջը շարւել էին սիւննիք, ինչպէս երկում էր նրանք քաղցր խօսակցութեան մէջ էին, իրիկւայ կատարած գաղանութիւնների առիթով: Նրանցից իւրաքանչիւրը պարծանքով պատմում էր իր արածը, թէ ինչպէս օրը ցերեկով մտան Խան գիւղը և մի քանի ըոպէի մէջ տակն ու վրայ արին ամեն ինչ, թալանեցին մարդկանց և որի բաժին արին, իսկ գեղեցիկ աղջկերանց և մատաղ մանուկներին՝ ձեռները կապուտած՝ գերի տարան: Այդ ամենը նրանք կատարեցին մի օրւայ ընթացքում, որովհետև այդպէս էր պատվիրել Մէլթի-բէկը: Նրանք պատմում էին իրանց կատարած գաղանային բարբարոսութիւնները: Նրանցից մէկը խուրջինից դուրս էր տալիս հինգ հոգու թալանած աւարը և դարսում էր ընկերների առաջ:

— Դարսիր բոլորը և համարիր, ասաց նրան-
ցից մէկը, տեսնենք ով ի՞նչքան տղամարդում Օհանն այլ ևս չըկարողացաւ համբերել. — անօ-
թեամբ է շարժւել և ի՞նչքան բան է բերել: Դա բէններ, գուրս թռաւ նրա յուզւած սրտից, և
նրանց տաճապետն էր: Բարձրահասակ սիւննին միւնոյն ժամանակ արձակեց հրացանը:
միամտաբար մէկը միւսի յետեից գուրս էր տալիս Մի ակնթարթում մահարեր գնդակը նետւե-
խուրջինից զանազան թանգագին ոսկեղէններ, լով ուղղակի մխւեց հինգ հոգուց մէկի սիր-
քարեղէններ և ուրիշ զանազան տնային զարդեր. ար, որը իսկոյն երեսի վրայ փուեց կրակի մէջ: Մնացեալ չորս հոգին իսկոյն իրանց տեղե-
նօթներ, շատ խաչեր և ուրիշ առարկաներ: Տարից վեր թռան և իւրաքանչիւրն առաւ իր հը-
նուածէր Օհանը տեսնում էր այդ ամենը, որը մի բացանը, որը միամտաբար դրած էր իրանց կող-
քանի քայլ հեռու կանգնած էր: Մի քանի ըոպէ քիտելուց յետոյ՝ նա ընկաւ մտածմունքի մէջ, չըդառն յանկարծակի գնդակ նետողին: Ո՞վ կա-
բայց ըոպէական մտածողութիւնից յետոյ նրա մտքում ծագեց մի միտք և իսկոյն յետ դարձ-
րեց ձին դէպի անտառի խորքը, որտեղ ծառերը մութ անտառում և յարձակւել հինգ սիւնին-
ների վրայ. ով կարող էր երեակայել այդ: Սար-
սափը տիրեց նրանց և նրանք մնացին շւարած-
ու կրկին մօտեցան դէպի կրակը: Այդ վայրկեա-
նին յանկարծ երկրորդ անգամ տանուածէր Օհանը
հաստաբուն ծառից, իսկ ինքը առնելով հրացա-
նը, բարձրացաւ մի այնպիսի ծառի վրայ, որտե-
ղից կարելի էր ամեն ինչ տեսնել ու լսել: Երբ զին կատաղեցան և առանց իմանալու յանկար-
նա ամրացաւ իր տեղում, նորից սկսեց լաւ դի-
տել դէպի կրակը, նա այժմ պարզ տեսնում էր
ամեն ինչ, տեսնում էր կրակի շուրջը բոլորւած
աւաղակներին, թէ ինչպէս նրանք մի օրւայ մէջ թալանած աւարը կիսում էին իրանց մէջ,
կարծես անօրէնները իրանք էին արիւնքը տիւնը
թափել և աշխատել այդ բոլորը:

Ծոպէական լուսթիւնից յետոյ՝ տանուածէր

Մի ակնթարթում մահարեր գնդակը նետւե-
խուրջինից զանազան թանգագին ոսկեղէններ, լով ուղղակի մխւեց հինգ հոգուց մէկի սիր-
քարեղէններ և ուրիշ զանազան տնային զարդեր. ար, որը իսկոյն երեսի վրայ փուեց կրակի մէջ: Մնացեալ չորս հոգին իսկոյն իրանց տեղե-
նօթներ, շատ խաչեր և ուրիշ առարկաներ: Տարից վեր թռան և իւրաքանչիւրն առաւ իր հը-
նուածէր Օհանը տեսնում էր ամենը, որը միամտաբար դրած էր իրանց կող-
քանի քայլ հեռու կանգնած էր: Մի քանի ըոպէ քիտելուց յետոյ՝ նա ընկաւ մտածմունքի գնդակ նետողին: Ո՞վ կա-
բայց ըոպէական մտածողութիւնից յետոյ նրա մտքում ծագեց մի միտք և յարձակւել հինգ սիւնին-
ների վրայ. ով կարող էր երեակայել այդ: Սար-
սափը տիրեց նրանց և նրանք մնացին շւարած-
ու կրկին մօտեցան դէպի կրակը: Այդ վայրկեա-
նին յանկարծ երկրորդ անգամ տանուածէր Օհանը
հաստաբուն ծառից, իսկ ինքը առնելով հրացա-
նը, բարձրացաւ մի այնպիսի ծառի վրայ, որտե-
ղից կարելի էր ամեն ինչ տեսնել ու լսել: Երբ զին կատաղեցան և առանց իմանալու յանկար-
նա ամրացաւ իր տեղում, նորից սկսեց լաւ դի-
տել դէպի կրակը, նա այժմ պարզ տեսնում էր
ամեն ինչ, տեսնում էր կրակի շուրջը բոլորւած
աւաղակներին, թէ ինչպէս նրանք մի օրւայ մէջ թալանած աւարը կիսում էին իրանց մէջ,
կարծես անօրէնները իրանք էին արիւնքը տիւնը
թափել և աշխատել այդ բոլորը:

— Տմարդութիւն է թագնւած տեղից յարձակւելը և միւնոյն ժամանակ պատիւ չէ բերում իզիթութեանը: *) Եթէ տղամարդէք, մէլլան դուրս եկէք:

Ոչ մի պատասխան չըստայցան նրանք, այլ միայն պատասխանի փոխարէն մի գնդակ ստացան, որ նոյնպէս մխւեց նրանցից մէկի մէջքը: «Տմարդութիւն», հառաչեց նա ու մտաւ Մահմէդի գիրկը: Վերջին երկու հոգին շւարած՝ կամեցան փախչել, բայց ինչպէս, — թողնել իրանց ընկերների գիակը և այդքան աւարն ու հեռանալ: Այդ դժւար էր նրանց համար: Բայց ինչ անէին, որ այդ վտանգից իրանց փրկել կարողանային: Նրանք այն աստիճան շփոթւել էին և զարմացել, որ ստիպւած էին կարծելու թէ երկնքիցն են այդ գնդակները տեղում, և այդ այն պատճառով էր, որ նրանք այն աստիճան գազանային ձեռով էին վարւել Խան գլուղի քրիստոնեայ բնակիչների հետ, և կարծում էին թէ Աստւած է պատժում իրանց, Աստւած է տեղում երկնքից այդ գնդակները: Բայց աւաղ, Աստւած այդպէս շուտ չէ անում մեղաւորների դատաստանը...

Երկու սիւննիները այդ մտածմունքից յետոյ մօտեցան իրանց աւարը ժողովելու, որպէս զի շուտով հեռանան այդտեղից: Բայց դժբախտաբար այդ բանը նոր առիթ տւեց թշնամուն և նա նորից իր գնդակը հասցրեց նրանցից մէկին հէնց այն ժամանակ, երբ նա մի ուրբը

*)Տղմարդութեան

նոր էր դրել ձիու ասպանդակին: Բայց այժմ, դեռ ձիու վրայ չընստած՝ ձին խրտնեց և սկսեց փախչել՝ քաշ տալով իր յետեկից տիրոջը: Միւս ընկերը տեսնելով այդ սարսափահար թողնելով ամեն ինչ, սատանայի նման անյատացաւ անտառի խորքը:

Ավանս, որսիս մէկը ձեռքիցս թռաւ, ասաց տանուտէր Օհանը իր մտքում, և կամեցաւ ցած իջնել ծառից: Բայց նոյն վայրկեանին մտածեց նա եթէ այժմ ես ցած իջնեմ, կարող եմ ենթարկել վտանգի, միակ սիւննին, որ սատանայի նման անյայտացաւ, կտսկած չըկայ, որ կարող է թագնւած լինելու տեսնելու թէ ովկ էմօտենում այդքան աւարը տանելու, կամ ինչով է վերջանում այդ բոլորը:

Եւ իրաւ շատ ձիշդ էր տանուտէր Օհանի խելացի կարծիքը: Միւննին այս ազգից չէ, որ մահից վախենայ ու այդքան աւարը թշնամուն թողնելով հեռանայ: Ո՞վ գիտէ նրանք քանի տըներ էին քանդել և քանի մարդկանց որի բաժին արել, որ այդքան աւարը ձեռք էին բերել. որտեղ որ է նա շուտով կըմօտենայ, ասաց տանուտէր Օհանը և սկսեց արթուն առիւծի պէս դիտել գէպի կրակը:

Անցաւ կէս Ժամ:

Երկինը բաւական պարզել էր, ամեն տեղ տիրում էր խորին լուռթիւն: Հեռախց, շատ հեռուից լուռում էր քարւանի ձայնը, երկում էր, որ նա գիշերւայ թանձը մառախուղի պատճա-

ուստ կանգ առած տեղից սկսել էր շարունակել իր մանափառից:

— Կուսաբացը մօտ է, ասաց իր մտքում տանուտէր Օհանը և միւնոյն ժամանակ իր հայեացքըն ուղղելով դէպի կըակը, մի մարդ նկատեց:

Այդ միակ սիւնին էր, որ թագստատեղում երկար մնալուց յետոց, ոշինչ չկարողացաւ իմանալ, և թշնամուն հեռացած համարելով, մօտեցաւ իր ընկերների ձիերն ու աւարը տանելու բայց որտեղից կարող էր նա այդ բանը անել, քանի որ տանուտէր Օհանը վերջին կարմիր և մահարեր գնդակն էր պատրաստել նրա համար: Թէ նա պատրաստեց իր հրացանը, բայց մտածեց ցած գալ ծառից և ուղղակի զինաթափ անել նըրան: — Թող յայտնի լինի այդ անօրէնին, թէ ով էր չորս գնդակի բաժին անողը իր ընկերներին, — մտածեց նա և ցած իջնելով ծառիդ, դէմ առ դէմ կանգնեց սիւնոււ առաջ և հրամայեց.

— Վայր դիր աւարը, անօրէն, այդ զու մարսել չես կարող:

Սիւնին սարսափահար յետ նայեց և պատասխանեց:

— Այդ դժւ ես, ասա, գեաւուր, տմարդութիւն չէր քո արածը:

— Գիտեմ, անօրէն, — պատափահանեց տանուտէր Օհանը. — Նեղ տեղ ընկած ժամանակը մարդու տմարդութիւնից կըխօսէք. — բա, անօրէն, դա տմարդութիւն չէ, որ ամբողջ լիան դիւղը քանդեցիք, իսեղ ու անմեղ զիւղայոց կոտորե-

ցիք, հարիւրաւոր հարս ու աղջիկ ձեր գազանային կըքերին զոհ դարձրիք. ասա, անօրէն, դա մարդութիւն է, իսկ իմ արածը տմարդութիւն: Այ դուք անօրէններ, հէնց որ մէյզանը ձերն է լինում, էլ ոչ տմարդութիւն էք յիշում, ոչ մարդութիւն. էլ ոչ հասակի էք նայում, ոչ սեռի, ոչ աղաչանքի և ոչ արտասուքի. սոխի պէս սըի բերան էք տալիս անմեղ ժողովրդին, և դեռ յանդինում էք ինձ տմարդ անւանել. ասա, անօրէն, ինչ կանէիք ինձ, եթէ ես ընկած լինէի ձեր հինգ հոգու ձեռքը. չէ որ սոխի պէս գուշը կըթոցնէիք՝ առանց մի բան ասելու. չէ որ ձեր իւրաքանչիւրի սուրը կըշաղախւէր իմ անմեղ արիւնովս: Ես այդ լաւ զիտէի, անօրէններ, և վճռեցի ձեզ մի-մի գնդակ պարգի տալով ուղարկել ձեզ ձեր մեծ մարդարէի մօտ:

— Բաւական է, որքան ձեր Մահմէդի ասելով քրիստոնեաներին կոտորելու փոխարէն հիւրիներ ստացաք «Ճաննաթում», այժմ էլ քրիստոնեաները պէտք է պարզմներ ստանան. բայց ոչ ձեզ պէս մոլեռանդ անիրաւութիւնների փոխարէն և այն էլ ոչ թէ երկնքում, այլ աշխարհիս վրայ, իրանց արդար կըրպով կատարած քաջագործութիւնների փոխարէն, որոնցով նրանք մի գործութիւնների փոխարէն, անոնց կըթողնեն իրանց աղաքայ զաւակների համար...

— Ասա, ինչ որ կամենաս, պատամխանեց կատաղած սիւնին. այժմ յաղթանակը դու տռ, ուր.

բայց անպատիժ չես մնալ, գեաւուր, աւելացրեց սիւնին:

— Թօսք չըկայ, որ եթէ մենակ ինձ ճանկէք, պատասխանեց տանուտէր Օհանը. անհոգ եղիր, որու հինգ վայրկեանից աւել ապրելու իրաւունք չունիս, թող քո մեծ ասիրա Մէյթի-բէկը լաւ պատրաստութիւն տեսնի մեզ վրայ գալու: Անօրէններ, այդքան անմեղների արեան բողոքը լսեց վերջապէս մեծ մարդասէր թագուշին և նրա յաղթական զօրքը շուտով կըմտնէ Ըիրւանի գաւառն ու ձեր խանական իշխանութիւնը խապառ կըջնջէ:

— Զուր է կարծիքդ, գեաւոր, որ մինչև սսների գալը Մէյթի-բէկն իր ասածը կատարած վերջացրած չըլինի, ասաց սիւննին:

— Եթէ ձեր Մէյթի-բէկը իմանայ թէ ինչպիսի կարմիր գնդակ եմ պատրաստել նրա համար, կարծեմ աւելի շուտով պիտի անէ իր ասածը: — Այդ միջոցին խօսակցութիւնից օգուտ քաղելով սիւննին կամենում էր ատրճանակը գաղտնի կերպով պարպել տանուտէր Օհանի վրայ, որը յանկարծ նկատեց և խկոյն հրացանի մի հարւածով կրակի մէջ գլորեց սիւննուն:

— Անպատիժ չես մնալ, գեաւուր, — ասաց սիւննին, թաւալելով կրակի մէջ:

— Եյրքիր, անօրէն, որու շատ անմեղների ես այդպէս այրել, — ասաց տանուտէր Օհանը:

Այսուհետեւ նա առանց ժամանակ կորցնելու հաւաքեց բոլոր աւարը, ձիերը և մի փոք-

րիկ քարւան կազմելով՝ սկսեց շարունակել .իր ճանապարհը:

Առաւօտեան Աղամալոյսն էր, երբ նա հասաւ իրանց գիւղի ծայրը. արդէն լսելի էին լինում աքաղաղների ձայնը և չների հաջոցը: Այդ վայրկեանին չորս տղամարդիկ մօտեցան նրան. գրանք գիւղի գիշերապահներն էին, որոնք հերթով ամեն գիշեր հակում էին ճանապարհները:

— Այդ բնչ ձիեր են, հարցրին նրանք, երբ մօտեցաւ տանուտէր Օհանը:

— Զեղ համար եմ գնել, — ասաց նա, որ հեծնէք ու մեր գիւղին մօտեցող թշնամուն իր արաժանի պատիքը տաք: Ոյսպէս անվերջ ուրախութիւններով տանուտէր Օհանը նրանց հետ միասին մտաւ գիւղը:

¶

Յուլիս ամիսն էր:

Սուաւօտեան արշալոյսը գեռ նոր էր ծագել, և իր ոսկէփայլ ճառագայթները կամաց-կամաց բարձրացնելով հեռաւոր հորիզոնից՝ սկսել էր ուրփուել Շիրւանի բարձր ու սրածայր սարերի գագաթներին: Բայց ահա կէս օրին մօտ՝ բնութիւնը սկսեց փոխել իր գոյնը, մի ժամ առաջ վայլող արեգակը այժմ ծածկւեց և ու մույլ ամպերով: Այդ բաւական չէր, բարձրացաւ մի նսովոր փոթորիկ, որ շատ սակաւ. կարող էր պատահել տար-

ւայ այդ ժամանակին: Ասախորժ քնոթէւնը կարծես նախագուշակում էր մի չըտեւառ գործնաք այդ երեկոյ այն ժողովրդի գլխին, որ տարիներ շարունակ հեծում էր թշնամու զաժան չժի տակ: Եւ իրաւ որ այդ ճիշտ էր: Այդ այս օշանակեալ երեկոն էր, որ Մէջթի-բէկը պէտք է յարձակէր Կ. գիւղի վրա: Բայց նա դեռ իր խարսխ ապասում էր Զահրէ ձորում, որտեղ խօսք էր տւել նրան Ղաջար գիւղի Սալիմ-բէկը՝ իրաւց ուժերը միացնելու: Բայց աւաղ, խաբուսիկ յոյս էր այդ Սալիմ-բէկը, որին սպասում էր նա դա Կ. գիւղի տանուտէր Օհանն էր, որ ինչպէս տեսաւ ընթերցողը, ծպտեալ կերպով մտաւ թշնամու բանակը և իրան թուրք տանուտէր ձևացնելով իմացաւ ամեն ինչ: Այժմ տանուաէր Օհանը պատրաստ էր իր քաջ գիւղացիներովը գնալ թըշնամու առաջ, այնտեղ, որտեղ խօսք էր տւել նրանց: Բայց նա գիւղացոց մեծ մասը թողեց գիւղում ու պատիրեց արթուն առիւծի պէս հսկել գիւղին, իսկ ինքն իր հետ տանելով եօթառասուն հոգի քաջ հըացանաձիդ ըրխասարդներ, կէս գիշերից յետոյ ճանապար ընկան Զահրի ձորը, որտեղ գտնուում էր Մէջթի-բէկն որ բաշխողուկներով: «Պէտք է աղւեսին իր քնումը խեղփել», ասում էր շատ անգամ տանուտէր Օհանը թէ չէ, որ նա իր բնից դուրս եկաւ, իր խորամանկութիւնով նա ամեն քայլում յաղթող կընանդիսանայ:

Իրաւ որ այդպիսի խորամանկ բնոթեան

տէր մի ազգ էին սիւննիները: Հենց որ հրապարակը իրանց էր ֆնում, էլ աշխարհիս երեսին ինչ անիրաւութիւններ ասես, որ չէին անում նրանք: Եւ այդ բոլորը կատարում էին իրանց օրէսքի թեկադրութեամբ, որովհետեւ աղդպէս էր քարոզում Մահմէդի զուրանը: Այդպէս էին քարոզում և նրանց մոլեսանդ հոգեւորականները: Առվ չէ նա ատում Մահմէդին և նրա գրած սուրբ զուրանին, կատորեցէք նրանց, մեծ մարգարէն հալալ է անում նրանց արիւնը ձեզ»:

Բայց տեսէք ընթերցնդ, մի ազգ, որ այդքան ճշուաթեամբ կատարում էր իր օրէնքի ամեն մի ծէսը, նեղ տեղն ընկած ժամանակ, նըրանք, այդ խոլամի հաւատարիմ զաւակները, ուրանում էին իրանց օրէնքը և խոլամին: «Եթէ տեսար կեանքդ վտանգի մէջ է, աղատւելու ոչ մի ելք չունիս, ուրացիր օրէնքդ, ուրացիր ինձ ես կըներեմ քեզ»: Կան և այս տողերը նրանց զուրանի մէջ: Եւ ահա այդ հիման վրայ նրանք ամեն կէտում էլ յաղթող էին հանդիսանում:

Այդ բոլորը լաւ էր իմանում տանուտէր Օհանը, ուստի ճանապարհին պատւիրեց իր քաջերին, որ եթէ Ծատւածային զօրութեամբ իրանք կըյաղթեն թշնամուն, առանց մի վայրկեան անգամ կորցնելու՝ պէտք է բոլորին սրի բաժին անել: միայն բացի Մէջթի-բէկից, որին մատղրւել էր ձեռն ու ոտը կապոտած յանձել զեներալ Զուբովին:

Կէս գիշեր էր, երբ տանուտէր Օհանը իր

քաջ պիւզացիներով հասաւ թշնամու բանակը։ Նա իր մարդկանց բաժանեց չորս մասի և իւրաքանչիւրին պատէրներ տալով ցոյց տւեց, թէ որ կողմից պէտք է յարձակել թշնամու վրայ։ Եւ ահա երբ նա իր սակաւաթիւ մարդկանցով չորս կողմից շրջապատեց թշնամուն և նշան տրւեց յարձակման՝ հրացանները գոռացին ամեն կողմից։ Կատաղի թշնամին, որ այդ ժամանակ քաղցր քնի մէջ էր, իսկոյն զարթնելով՝ իւրաքանչիւրը իր զէնքն առաւ և սկսեց կանոնաւոր կոհիւր երկու կողմից։ Բայց երբ տեսան չորս կողմիցն էլ կարկտի պէս տեղում են զնդակները։ Հէնց կարծեցին թէ ոռւսաց զօրքն է։ Շատերը պատրաստում էին փախչել, որովհետեղ դիտէին որքան էլ քաջութիւն ցոյց տան, այնուամենայնիւ ապարդիւն պիտի անցնեն իրանց բոլոր ջանքերը։ Բայց բանն այն էր, որ փախչելու նսար չունէին. որ կողմից որ կամենում էին փախչել, զնդակահարւում էին.

Սյդ վայրկեանին Մէլթի-բէկը կատաղած զուաց։

— Իսլամի զաւակներ, ցոյց տւէք ձեր քաջութիւնը, ես գեռ կենդանի եմ։

Հէնց այդ ձայնին էր սպասում տանուտէր Օհանը, որ իմանար թէ որ կողմումն է կանդնած այդ անօրէն զազանը։ Նա իր ձին մտրակելով՝ մօտեցաւ մի քանի քաջերով և շրջապատելով Մէլթի-բէկին, հրամայեց։

— Անօրէն, վայր դիր քո ձեռքով զէնքերը՝

թէ չէ պլուխո սոխի պէս կըթոցնեմ։

Մէլթի-բէկը, որի համար հազար քրիստոնեայի գլուխը մի սոխի գին չունէր, իր կեանքում այդպիսի վիրաւորական խօսք անդամ չէր լսել և կամենալով իր վերջին ոյժը փորձել, նա ձեռքը տարաւ իր դաշոյնին, բայց գեռ կէպ պատեանի մէջ էր, երբ տանուտէր Օհանի թուրը փայլեց և այնպէս հասցրեց նրա գլխին, որ իսկոյն գլուխը սոխի պէս երկու կէս եղաւ։ Մէլթի-բէկը իսկոյն ձիուց վայր ընկաւ նրա ոտների տակ։ Այնուհետև նա հրամայեց կենդանի մնացած սիւններին, որոնց արդէն շրջապատել էին գիւղացիք, կոտորել առանց խղճալու։

— Ժամանակ է, տղերք, թշնամու հետ վարւել այն ձեռվ, ինչ ձեռվ վարւում են նրանք մեզ, հետ, — ասաց տանուտէր Օհանը և թուրը մերկացնելով, մտաւ կուի մէջ։ Բայց այդ վայրկեանին յանկարծ կատաղած սիւններից մէկը գաղտնի կերպով պարպեց իր ատրճանակը հակայ տանուտէր Օհանի վրա։ Եւ նա վիրաւորւած՝ ձիուց վայր ընկաւ։ Սյդ միջոցին թէև վրայ հասան նրա քաջ գլուղացիները, բայց արդէն ուշէր։ Գընդակը վատ տեղիցն էր կպել և նա գտնուում էր գերձան շնչում։ Հէնց այդ միջոցին լսեց հեռւից փողերի ձայնը. գա ոռւսաց զօրքն էր, որ լուսադէմին արդէն մօտենում էր Շիրւանի գուլափին. Նա մի անդամ ևս աշքերը բացեց ու հարցրեց. — Արդեօք ոռւսաց զօրքը մօտենում է։ Նրան միամտացըին, որ արդէն երևում է։

«Ես ծնւեցի և մեռայ իմ հայրենիքի հողն ։
ու ջուրը և գիւղի անունը բարձր պահելու համար»։
Այս եղաւ նրա վերջին խօսքը և աւանդեց հոգին»։

Եւ ահա նոյն օրը, ուղիղ կէսօրին ոռւսաց
զօրքը առանց մի ընդհարում ունենալու, մտաւ
քաղաք։ Մուստաֆայ խանը իր ձեռքով յանձնեց
քաղաքի բանալին գեներալ Զուբովին, և խօս-
տացաւ, որ այսուհետեւ հաւատարիմ կըմուայ ոռւ-
սաց կարաւարութեան։ Այսպէս ահա 1796 թւին,
յուլիսի վերջին, Շիրւանի գաւառը՝ ոռւսաց կա-
ռաւարութեան ձեռքն անցաւ։


Իսկ տանուտէր Օհանի մարմինը Կ. գիւղացիք
տարան ամփոփեցին իրանց գիւղի գերեզմանա-
տանը և նրա գերեզմանաքարի վրայ գրեցին.

«Այս է տապանը տանուտէր Օհանի,
որ ծնւեց 1751 թւին, և սպանւեց 1796
ին, Սիւննի Մէլիթ-բէկ աւազակապետի
հետ ունեցած կուռում»։

Եւ մինչև այսօր էլ այդ քաջ տանուտէրի
մարմինը ամփոփւած է Կ. գիւղի գերեզմանա-
տանը։



«Ազգային գրադարան»



NL0323752

